# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝** ԳԲՔԱ-ԷՍ-2019/21, 13.02.2019թ.

**Բողոք բերող անձ՝** Գաբրիել Գաբրիելյան ԱՁ

**Պատվիրատու՝** ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

**Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝** ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/18 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ / ընտանի կենդանիների կերի ձեռքբերում.

**Բողոքի պահանջը՝**

Խնդրում ենք գնման ընթացակարգը հայտարարել չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

• 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

• 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գաբրիել Գաբրիելյան Ա.Ձ.
ՀՎՀՀ: 37412736
ք. Երևան, Ամիրյան 10
+37410560119

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
Գաբրիել Գաբրիելյանից
13.02.2019թ.

1) Բողոքը ներկայացրած անձի անվանումը՝ Գաբրիել Գաբրիելյան (Լիազորագիր տրված 13. 02. 2019թ. Մերգեյ Գաբրիելյանին (անձ. տվյալներ 0311944691)) անձը հաստատող փաստաթղթի պատճենը կցվում է): Հասցե ՀՀ ք. Երևան, Ամիրյան 10:

2) Պատվիրատուի անվանումը և հասցեն՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն, 09/8 Եղվարդ 3րդ խճուղի Երևան 0054:

3) Բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ ԷԱՃԱՊՁԲ-19/18 ծածկագրով ընտանի կենդանիների կերի ձեռքբերման ընթացակարգ:

4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը՝

Պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը:

Պատվիրատուի կողմից հայտատարված մրցույթի տեխնիկական բնութագիրը կազմված է միայն մեկ ապրանքատեսակի համար, ավելին աշխարհում միայն մեկ նմանատիպ ապրանքն արտադրողի համար:

- ✓ Տեխնիկական բնութագիրը չի ապահովում մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար.
- ✓ Տեխնիկական բնութագիրը առաջացնում է մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների.

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

Տվյալ ընթացակարգն առաջին անգամ հայտարարվել է 2018թ.-ի դեկտեմբերին, որի ժամանակ ներկայացվել են դիմումներ ՀՀ ՖՆ և Պատվիրատուին:

ՀՀ ՖՆ կողմից ներկայացված պատասխանը կցում ենք, որում հստակ գրված է որ վերահայտարարվող մրցույթում անհրաժեշտ է վերանայել գնման առարկայի բնութագիրը, այն համապատասխանեցնելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին, սակայն գնման ընթացակարգը վերահայտարարվել է ս. թ. 06. 02-ին, որում տեխնիկական բնութագիրը 100 տոկոսով նման է նախորդ գնման ընթացակարգում ներառված տեխնիկական բնութագրին:

Տեխնիկական բնութագիրը կազմված է խտրական և յուրաքանչյուր ցուցանիշ ներկայացված է առանց հնարավոր շեղման, կամ թույլատրելի սանդղակի:

Տվյալ տեխնիկական բնութագրով հարցումներ են արվել նմանատիպ մակարդակի կերեր արտադրող 3 խոշոր ֆիրմաների աշխարհում, և ստացվել են պատասխաններ, համաձայն որոնց նմանատիպ ցուցանիշներով կերեր չկան արտադրության մեջ:

Հաշվի առնելով վերոգրյալը խախտվել է նաև ՀՀ կառավարության 04. 05. 2017թփ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված լկարգի 22-րդ կետը՝ համաձայն որի գնման առարկաների բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանք պետք է բավարարեն 1-ից ավելի հնարավոր մասնակիցների:

Բացի այդ նմանատիպ ցուցանիշներով կերի պահանջն օբյեկտիվորեն հիմնավորված չէ:

Նշված մրցույթի տեխնիկակն բնութագրին համապատասխանում է միայն Royal Canin ապրանքանիշի միայն «Sport» տեսակի կերը:

Պատվիրատուի կողմից տեխնիկական ուղղորդման մասին վերջինիս հայտնել ենք նաև բանավոր:

6) Բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը կցվում է:

Խնդրում ենք գնման ընթացակարգը հայտարաբել չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի. Գնման առարկայի բնութագրերը:

Խնդրում ենք տվյալ մրցույթը քննել և հայտարարել չկայացած:

Հարգանքներով Գաբրիել Գաբրիելյան

ՄՏԱՎՈՐԱԳՐՈՒՄ
N 5788
13. 02. 19